Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Արգավանդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Ինֆորմատիկա /ԹԳՀԳ 11 Ժամ / գերմաներեն /18ժամ/ հանրահաշիվ, երկրաչափություն (մաթեմատիկա) /25 ժամ/ հայոց լեզու և գրականություն /11ժամ/ ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում, մեկ լուսանկար 3x4 չափի,
- Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/
- Անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/,
- Ինքնակենսագրություն,
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են հունիսի 11 -ից մինչև հունիսի 24-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Ինֆորմատիկա /ԹԳՀԳ/ մրցույթը տեղի կունենա հունիսի 27 –ին ժամը 12:00-ին, գերմաներենի մրցույթը տեղի կունենա հունիսի 27 -ին ժամը 14:00-ին, հանրահաշիվ, երկրաչափության (մաթեմատիկա) մրցույթը տեղի կունենա հունիսի 30-ին՝ ժամը 12:00-ին, հայոց լեզու և գրականության մրցույթը տեղի կունենա հունիսի 30-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արմավիրի «Արգավանդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

093 799 433 հեռախոսահամարով

Հասցե՝ Արմավիրի մարզ գ. Արգավանդ 1փ. 17շ.